ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Մայակովսկի համայնք, գ. Մայակովսկի. Հեռ 060 28 50 13 E-mail mayakovski-1@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«19» հոկտեմբերի 2018 թվական N 106-Ա

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 48 –րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով Մայակովսկի համայնքի բնակիչներ Վարդինե Վարդանյանի, Պողոս Մուրադյանի և Մարետա Մարտիրոսյանի դիմումները ֆինանսական օգնության մասին, հաշվի առնելով նրանց ընտանիքների սոցիալական վիճակը և համայնքի սոցիալական հանձնաժողովի եզրակացությունը, ***որոշում եմ՝***

1.Մայակովսկի համայնքի 2018 թվականի բյուջեի « Սոցիալական օգնություններ » 4729 հոդվածից տալ դրամական օգնություն.

Վարդինե Վարդանյանին -40 000/քառասուն հազար/դրամ,
Պողոս Մուրադյանին -30 000/ երեսուն հազար/ դրամ,
Մարետա Մարտիրոսյանին -30 000/ երեսուն հազար/ դրամ,
Ընդամենը 100 000 / հարյուր հազար/ դրամ:

2.Հանձնարարել հաշվապահ Ա. Հարությունյանին կատարել վճարում :
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԲԱՐՍԵՂՅԱՆ

Գ.Մայակովսկի
2018թ.հոկտեմբերի 18

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Մայակովսկի համայնք, գ. Մայակովսկի. Հեռ 060 28 50 13 E-mail mayakovski-1@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«19» հոկտեմբերի 2018 թվական N 107-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԿՈՂՄԻՑ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԸ ՀՐԱՊԱՐԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 23-րդ հոդվածի պահանջները՝ *որոշում եմ.*

1. 2018թվականի ընթացքում Մայակովսկի համայնքի ավագանու կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտի՝ համայնքում պաշտոնական հրապարակման օր նշանակել որոշումն ընդունելու օրվան հաջորդող 5-րդ օրը:

2. Նորմատիվ իրավական ակտը հրապարակելու պատասխանատվությունը դնել աշխատակազմի քարտուղար Վեներա Փայտյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԲԱՐՍԵՂՅԱՆ

Գ.Մայակովսկի

2018թ.հոկտեմբերի 19

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Մայակովսկի համայնք, գ. Մայակովսկի. Հեռ 060 28 50 13 E-mail mayakovski-1@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«22» հոկտեմբերի 2018 թվական N 108-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 17-րդ հոդվածի '

որոշում եմ.

2018 թվականի հոկտեմբերի 23-ին ժամը 11:00-ին հրավիրել համայնքի ավագանու արտահերթ նիստ հետևյալ օրակարգով.

1. Համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 13-ի N 58-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին
2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մայակովսկի համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 13-ի N 62-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԲԱՐՍԵՂՅԱՆ

Գ.Մայակովսկի

2018թ.հոկտեմբերի 22